

PRESENT PERFECT-PAST INDEFINITE ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ ՓՈՒՆՅԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեր ուսումնասիրության առարկան Present Perfect-Past Indefinite հակադրության անդամների փոխհարաբերության զուգահրական քննությունն է այս հակադրության անդամների հայերեն համահարաբերական ձևերի առանցքում:

Հայտնի է, որ անգլերենի բայական համակարգում առանձնապես դժվար է տարբերակել Present Perfect, Past Indefinite ժամանակաձևերի իմաստաբանությունը և սրանով պայմանավորվող նրանց գործածության շրջանակները, քանի որ վերոհիշյալ հակադրության անդամները գտնվում են իմաստաբանական շատ սերտ կապի մեջ: Նրանց միջև առկա այդ բարդ փոխհարաբերությունը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է պարզել, թե իմաստաբանական ինչ տարբերակիչ հատկանիշ է ընկած այս հակադրության հիմքում:

Այս հարցին պատասխանելու համար նախ անհրաժեշտ է սահմանել ժամանակաձևերի իմաստաբանությունը և նրանց տեղը անգլերեն բայի խոնարհման հարացույցում:

Քերականագիտության մեջ խիստ տարամեծ են կարծիքները Present Perfect ժամանակաձևի իմաստաբանության վերաբերյալ, քանի որ այն ունի երկակի ժամանակային բնույթ: Վիճելի է այն հարցը, թե որ առանցքին է պատկանում այս ժամանակաձևը: Լեզվաբանների մի խումբ դասում է այն ներկայի եզրին (Դ. Քրիստալ¹, Բ. Ալլեն²), մի այլ խումբ էլ համարում է այն անցյալի ձև (Ֆ. Փալմեր³) կախված, թե նրանք ժամանակաձևի սահմանման հիմքում ինչ են դնում՝ հաշվարկման կե՞տը, թե՞ բայաձևով հաղորդած իմաստը: Եթե՞ ելնում են հաշվարկման կետից, ապա դիտում են ներկայի բայաձև, իսկ եթե բայաձևի հաղորդած իմաստից՝ անցյալի բայաձև, որովհետև հաղորդում է ավարտված-կատարված գործողություն:

Մեր վերլուծությունը խարսխվում է այն դրույթին, որ քերականական ժամանակը որոշակի գործողության, եղելության հարաբերակցումն է ժամանակային առանցքի վրա պայմանականորեն ընդունված որևէ հաշվարկման կետի: Իսկ սա ենթադրում է, որ խոսքի պահը ժամանակային հարաբերությունում հաշվարկման միակ կետը չէ: Քերականական ժամանակ ասելով հասկանում ենք որոշակի գործողության, եղելության հարաբերակցումը ոչ միայն խոսքի պահին, այլև անցյալ ու ապառնի ռոլորտների որոշակի ժամանակակետերի հարաբերակցումն արտացոլող գործողություններ, եղելություններ: Ըստ այդմ էլ այն ժամանակաձևերը, որոնք հարաբերում են ներկա պահին, տեղաբաշխվում են ներկայի մեջ, անցյալի որոշակի ժամանակակետի համեմատ վերցված գործողությունները, եղելությունները՝ անցյալի ռոլորտում, և ապառնի հարաբերմամբ վերցված գործողությունները, եղելությունները՝ ապառնիում: Ըստ որում, ամեն մի ժամանակակետի հարաբերությամբ գործողությունը կարող է լինել նախորդող, միաժամանակյա և հաջորդող: Սա դառնում է ընդհանուր կադրապար լեզուներում ժամանակների հնարավոր թիվը, նրանց հարաբերությունը սահմանելու համար: Առաջնորդվելով այս կադրապարով՝ անգլերենի սահմանական եղանակի դիմավոր ձևերը, ներկայանալով որպես ժամանակայնության դաշտի միջուկ, ձեռք են բերում նըշ-

¹ Տե՛ս D. Crystal, Specification and English Tenses. In: Journal of Linguistics. New York, V. 2, Number 1, 1966:

² Տե՛ս R. Allen, The Verb System of Present-Day American English, Mouton and Co. The Hague-Paris, 1966:

³ Տե՛ս F. Palmer, A Linguistic Study of the English Verb. Longmans, 1965:

ված ժամանակակետերի այնպիսի տեղայնացում, որն ըստ էության անզլերենի խոնարհման հարացույցն է՝ իր թվացյալ բազմազանությամբ:

Ժամանակի առանցքում ներկա կամ խոսքի պահի հետ հարաբերող ժամանակաձևերն են՝ Present Indefinite, Present Perfect (իրենց կերպային զույգերով հանդերձ) և Future Indefinite: Չնայած այս բոլոր ժամանակաձևերը հարաբերում են ներկային, սակայն տարբերվում են միևնույն ներկա պահին հարաբերակցելու բնույթով: Present Indefinite ժամանակաձևով հաղորդվող գործողությունը համընթաց է խոսքի պահին, Present Perfect ժամանակաձևով ներկայացվող գործողությունը նախորդող է նույն ներկա պահին, իսկ Future Indefinite ձևով հաղորդվող գործողությունն իր բնույթով հաջորդող է: Սա արդեն վկայում է նշված ժամանակաձևերի իմաստաբանական տարբերակիչ հատկանիշների մասին՝ համընթացություն, նախորդում, հաջորդում, որոնք պայմանավորում են նրանց կայացումը:


Անցյալի ժամանակային ձևերը կունենան հետևյալ տեղայնացումը ժամանակային այս ոլորտում: Past Indefinite ժամանակաձևն իր կերպային զույգով հանդերձ հաղորդում է գործողություն, որ միաժամանակյա է անցյալում պայմանակամորեն ընդունված հաշվարկման կետին: Այս նույն անցյալի հաշվարկման կետին, որ արտահայտվում է կամ անցյալի որոշակի ժամանակային ցուցիչով, կամ էլ մի այլ անցյալ գործողությամբ, նախորդման իմաստագառիչ հատկանիշով հարաբերում է Past Perfect ժամանակաձևը, և հաջորդող բնույթ ունի Future Indefinite-in-the Past ժամանակաձևով հաղորդվող գործողությունը, եղելությունը:

Ներկայացվող բայի խոնարհման հարացույցից պարզ է դառնում, որ մեզ հետաքրքրող ժամանակաձևերի (Present Perfect, Past Indefinite) հիմքում ընկած է ժամանակային տարբերություն, որն արտահայտվում է տարբեր հաշվարկման կետերի հետ հարաբերակցելու բնույթով:

Իսկ ինչպիսի՞ տեղայնացում ունեն այս նույն ժամանակաձևերի համահարաբերականները հայերենում:

Առաջնորդվելով քերականական ժամանակների տեղաբաշխման համընդհանուր կաղապարով՝ հայերենի ժամանակաձևերը կներկայանան հետևյալ հարացույցով: Ժամանակի առանցքում ներկա կամ խոսքի պահի հետ հարաբերող ժամանակաձևերն են՝ ներկա (միաժամանակություն խոսքի պահին), վաղակատար, հարակատար (նախորդում խոսքի պահին) և ապառնի (հաջորդում խոսքի պահին): Անցյալին հարաբերում են անցյալ կատարյալ, անցյալ անկատար, անցյալ հարակատար, անցյալ վաղակատար, անցյալ ապառնի, կ(ը)-ձևերի անցյալը: Հիշյալ ժամանակաձևերը դասավորվում են անցյալ ժամանակակետի հարաբերմամբ հետևյալ հաջորդականությամբ. անցյալ կատարյալը և անցյալ անկատարը միաժամանակ են անցյալի ժամանակակետին, անցյալ հարակատար, անցյալ վաղակատար ժամանակաձևերը նախորդում են, մինչդեռ անցյալ ապառնին ու կ(ը)-ձևերի անցյալը ունեն հաջորդող բնույթ այդ նույն ժամանակակետին:

Դժվար չէ նկատել, որ ներկայացվող բայական համակարգում անցյալ կատարյալ և վաղակատար բայաձևերի հիմքում ընկած է նույն ժամանակային տարբերակիչ հատկանիշը՝ գործողության հարաբերակցում անցյալի որևէ ժամանակակետի կամ ներկային, որ բնորոշ է այս ժամանակաձևերի համահարաբերականներին անզլերենում: Սա վկայում է զուգադրվող ժամանակաձևերի համարժեքության մասին: Չնայած նման իմաստային ընդհանրությանը, զուգադրվող լեզուներում հակադրության անդամների միջև առկա փոխհարաբերությունը տարբեր է: Այս նպատակով վեց ժամանակաձևերը ներկայացնենք երկու եռանկյան տեսքով.



(Pr. P-Present Perfect, Pr. I-Present Indefinite, PI-Past Indefinite, FI-Future Indefinite, PP-Past Perfect, F-in-the Past-Future Indefinite-in-the Past, վ-վաղակատար, ս-ներկա, Ա-Ապառնի, ԱԿ-Անցյալ կատարյալ, ԱԿ-Անցյալ վաղակատար, ԱԱ-Անցյալ ապառնի):

Սույն գծապատկերներով ներկայացվում է զուգադրվող ժամանակաձևերի հարաբերակցումը, և այս փոխհարաբերությամբ միաժամանակ արտահայտվում է կապը հիմնական ու հարաբերական ժամանակային ձևերի միջև: Հիմնական ժամանակային ձևերը (որոնց բովանդակում են նաև մեր կողմից վերլուծվող Present Perfect, վաղակատար ժամանակաձևերը) հարաբերում են խոսքի պահին, իսկ հարաբերական ժամանակաձևերը (սրանց շարքում է Past Indefinite, անցյալ կատարյալ) հարաբերակցում են անցյալի որոշակի ժամանակակետին: Սա մի կարևորագույն իմաստադրերակիչ հատկանիշ է, բայց կա նաև երկրորդը, որ արտահայտվում է նախորդման իմաստով (Present Perfect, վաղակատար) ժամանակաձևերի խոսքի պահի հետ հարաբերակցելու բնույթով: Անգլերենում Present Perfect ժամանակաձևի կապը ներկա պահի հետ այնքան ուժեղ է, որ հնարավորություն չի տալիս ձևին դուրս գալ ներկայի դաշտից և դրվել անցյալ եզրի ժամանակաձևի փոխարեն: Խոսքի պահը միշտ պահում է Present Perfect ժամանակային ձևն իր ծողականության դաշտում, իսկ հայերենում այդ կապը համեմատաբար թույլ է, ուստի համատեքստի համապատասխան պայմաններում վաղակատարը դուրս է գալիս ներկայի ժամանակային դաշտից և հայտնվելով անցյալի եզրում՝ դրվում է անցյալ կատարյալի փոխարեն: Սակայն վերջինը երբեք չի կարող անցնել ներկայի եզրը և դրվել վաղակատարի փոխարեն:

Սրանից հետևում է, որ հայերենի վաղակատար ու անցյալ կատարյալ ժամանակաձևերը գտնվում են հոմանիշային կապի մեջ, մինչդեռ անգլերենում նույն ժամանակաձևերի համահարաբերականների միջև նման հարաբերություն չի դիտվում: Ժամանակաձևերի միջև առկա հոմանիշային կապը գծապատկեր 2-ում արտահայտվում է հոծ գծերով:

Հայերենի վաղակատարի գործածության սահմաններն ավելի հոսուն են անգլերենի Perfect ժամանակաձևի համեմատ: Վերջինի կիրառության սահմանները խիստ ուրվագծված են շնորհիվ այն գործել կապի, որով այն հարաբերակցում է խոսքի պահին:

A. С. ОВАННИСЯН - К вопросу о соотношении временных форм Present Perfect и Past Indefinite. - В данной статье делается попытка исследовать временные формы Present Perfect и Past Indefinite в сопоставлении с коррелирующими формами в армянском языке, с целью выявления их алломорфных и изоморфных семантических свойств.